MA-SIS
ՄԱ-ՍԻՍ

Gazette des Arméniens de Lille, n° 1, Septembre 2007

Groupe de danse arménienne du Centre social du Faubourg de Béthune

Ֆոբուր դը Բեթյունի մշակույթի տան հայկական պարի խումբը

Ils sont prêts !

Les 19 jeunes danseurs ont travaillé dur pour y arriver. Depuis le début du mois de septembre, ils ont suivi deux à trois cours de 2 à 4 heures d'affilée par semaine. Nous pourrons tous voir le résultat de leur travail le 21 septembre lors de la fête donnée en l'honneur de l'Arménie par le centre social du quartier du Faubourg de Béthune (salle Concorde, boulevard de Metz à Lille).

Les 14 plus grands dont six garçons reproduiront les danses préparées. Les plus petits, plus difficiles à former, danserons le final. Ces deux groupes feront l'objet de cours séparés dans le futur afin de mieux profiter des conseils des professeurs. Liana, ancienne du premier groupe de danseurs formé il y a 3 ans, accompagnera les jeunes sur scène.

Arthur et Nariné ont fabriqué et ajusté les costumes en un temps record, il faudra ne pas oublier de les remercier si vous les croisez le 21 septembre.

Anna et Christina sont fatiguées mais heureuses de voir aboutir le travail de tous.

Anna, Christina et Louisette

Նրանք պատրաստ են

19 երիտասարդ պարողները տքնաջան աշխատել են, որպեսզի հասնեն դրական արդյունքների: Սեպտեմբեր ամսվա սկզբից նրանք շաբաթական 2-3 պարապմունքներ են անցկացնում 2-ից 4 ժամ տևողությամբ: Մենք բոլորս կարող ենք տեսնել նրանց աշխատանքի արդյունքները սեպտեմբերի 21-ին Ֆոբուր դը Բեթյունի մշակույթի տանը կազմակերպվող տոնին՝ նվիրված Հայաստանի անկախության օրվան («Կոնկորդ» դահլիճ, Մեցի բուլվար, Լիլ):

Ամենաբարձր տարիքի երեխաները, թվով 14 հոգի, որոնցից վեցը՝ տղաներ, մեզ կներկայացնեն նախօրոք պատրաստած պարեր: Իսկ ամենափոքրերը, որոնց հետ աշխատանքն ավելի շատ ժամանակ է պահանջում, կպարեն երեկոյի եզրափակման ժամանակ: Ապագայում այս 2 խմբերը կպարապեն առանձին, որը նրանց հնարավորություն կտա ավելի ուշադիր հետևել պարուսույցների խորհուրդներին: Լիաննան, որն արդեն պարի փորձ է ձեռք բերել առաջին պարի խմբի պարապմունքների ընթացքում սրանից մոտ 3 տարի առաջ, բեմում կլինի փոքրիկների կողքին:

Շատ կարճ ժամանակահատվածում Արթուրն ու Նարինեն կարել են խմբի անդամների զգեստները, այնպես որ չմոռանանք ամսի 21-ին նրանց մեկ անգամ ևս շնորհակալություն հայտնել: Աննան և Քրիստինեն հոգնած են, բայց և շատ ուրախ՝ տեսնելով իրենց աշխատանքի արդյունքները:

Աննա, Քրիստինե և Լուիզեթ

Les cours d'arménien: ils sont prêts également

Haïk, Siranouche et Tamar ont préparé la rentrée des cours d'arménien bien qu'aucune inscription n'ait été enregistrée suite à l'article publié dans le numéro 0 de la gazette. Les inscriptions pourront se faire le 21 septembre lors de la fête organisée salle de la Concorde ainsi que le premier jour des cours le samedi 29 septembre à 14 heures.

L'association *Ararat*, porteuse de cette opération, a décidé de demander pour l'inscription une somme de 5 euros par mois.

Ces coûts couvrirons les différents frais nécessaires pour la mise en place de ces cours : assurance, livres, photocopies, fournitures diverses …

Louisette

Հայերենի դասընթացներ. նրանք նույնպես պատրաստ են

Հայկը, Սիրանուշը և Թամարը նախապատրաստվել են աշնանը սկսվող հայոց լեզվի դասընթացներին՝ չնայած այն հանգամանքին, որ առայսօր ոչ մի գրանցում չի արձանագրվել, ինչպես որ նախատեսվում էր մեր էլեկտրոնային թերթի անդրանիկ համարում տեղակայված հոդվածում:

Գրանցումները կարող են կատարվել սեպտեմբերի 21-ին «Կոնկորդ» դահլիճում կազմակերպվող տոնին, ինչպես նաև շաբաթօրյա դասընթացների առաջին դասին, որը տեղի կունենա սեպտեմբերի 29-ին՝ ժամը 14.00.

Դասընթացների նախաձեռնող «Արարատ» միությունը որոշել է սահմանել գրանցման վճար՝ ամսական 5 եվրո:

Նախատեսված գումարը կծածկի դասընթացների կազմակերպման անհրաժեշտ ծախսերը՝ կապված պատճենահանման, գրքեր և գրենական պիտույքներ ձեռք բերելու հետ և այլն:

Լուիզեթ

Rencontres utiles

Siranouche et Spartak Kharabakhtsyan / Սիրանուշը և Սպարտակ Ղարաբաղցյանը

Et voici le mois de septembre. Nous avons tous commencé notre rentrée tourmentée avec de nouvelles forces et les bons souvenirs de l'été passé. Cet été m'a été particulièrement cher pour une autre raison : je suis allée en Arménie, le pays qui me tient le plus à cœur.

J'ai saisi l'occasion, à l'aide de mon parent Samvel Ghazaryan, de rencontrer Spartak Kharabakhtsyan, le principal spécialiste des questions sur la diaspora du Ministère de l'Éducation et des Sciences d'Arménie. Avec son concours, j'ai ensuite rencontré le responsable des relations avec la diaspora du même Ministère Hratch Tadevosyan. Je lui ai présenté la jeune Association arménienne de Lille et les projets à venir.

Ils ont accordé un grand intérêt à notre entreprise. Ils se sont montrés prêts à nous aider pour apporter leur contribution à la préservation de la langue et de l'esprit arméniens dans la dispora. Dès qu'ils ont appris notre intention d'ouvrir une école du samedi, ils nous ont immédiatement fait une liste de livres utiles et nous ont donné un bon pour les aquérir pour notre école alors qu'elle n'était même pas encore ouverte. Ainsi, avec mes propres forces, j'ai apporté à Lille 25 kg de livres. Les 20 premiers inscrits auront la possibilité d'avoir leurs propres abécédaires.

Nous avons également parlé du festival pan-arménien qui se déroule en Arménie tous les deux ans et au mois de septembre cette année. Plusieurs représentants de la diaspora sont accueillis, ainsi que des groupes d'enfants et d'adolescents qui sont installés dans des hôtels de haute gamme et par-

Օգտակար հանդիպումներ



Siranouche avec Hratch Tadevosyan Սիրանուշը Հրաչ Թադևոսյանի հետ

Ահա և սեպտեմբեր ամիսը եկավ, բոլորս ամռան լավ տպավորություններով և թարմ ուժերով սկսել ենք մեր աշխատանքային առօրյան: Ինձ համար այս ամառն առավել ևս տպավորիչ էր, քանի որ մեկնել էի շատ սիրելի երկիր՝ Հայաստան:

Առիթը չկորցնելով իմ բարեկամ Սամվել Ղազարյանի օգնությամբ հանդիպում ունեցա Կրթության և գիտության նախարարության սփյուռքի հարցերով գլխավոր մասնագետ Սպարտակ Ղարաբաղցյանի հետ, որը մեզ մեծ աջակցություն ցուցաբերեց և իր հերթին օգնեց, որ հանդիպում ունենամ նույն նախարարության սփյուռքի բաժնի պետ Հրաչ Թադևոսյանի հետ: Ես նրան ներկայացրի Լիլի մեր նորաստեղծ միությունը և սպասվելիք աշխատանքները:

Նրանք մեծ պատրաստակամություն ցուցաբերեցին մեզ աջակցելու և օգնելու հարցում, քանի որ խոսքը սփյուռքում հայկական ոգու և հայոց լեզվի պահպանման մասին է: Երբ իմացան, որ շաբաթօրյա դպրոց բացելու նպատակ ունենք, առաջարկեցին գրքերի մի ցանկ մեր դեռ չծնված դպրոցին: Ահա այսպես ես իմ ուժերով Լիլ բերեցի մոտ 25 կիլոգրամ գիրք: Այժմ առաջին 20 գրանցված երեխաները հնարավորություն կունենան ունենալու իրենց սեփական այբբենարանները:

Խոսք եղավ նաև այս տարվա սեպտեմբերին անցկացվելիք համահայկական փառատոնի մասին, որը տեղի է ունենում Հայաստանում՝ երկու տարին մեկ անգամ: Ընդունվում են տարբեր երկրներից ժամանած սփյուռքի ներկայացուցիչներ, մանկական և երիտասարդական խմբեր, որոնք տեղավորվում

ticipent à des manifestations culturelles et sportives. De nombreuses excursions sont également organisées pour visiter les monuments historiques. Cela veut dire que les enfants qui fréquenteront activement et d'une manière suivie les cours d'arménien et participeront aux manifestations organisées par notre association auront peut être la possibilité, dans deux ans, de partir en Arménie pour participer à ce festival. Nous avons aussi eu la proposition d'envoyer nos enfants en Arménie pour séjourner dans des colonies de vacances l'été.

Comme vous le constatez, il existe beaucoup de projets intéressants et attrayants. Or, leurs réalisations et démarrage nécessitent la participation active de chacun d'entre nous et, bien évidemment, notre bonne volonté. Notre motivation est simplement de protéger les intérêts de nos enfants et de préserver en eux l'âme arménienne.

Un grand merci à tous ceux qui nous apportent leur concours.

Siranouche

են բարձրակարգ հյուրանոցներում և մասնակցում մշակութային և մարզական միջոցառումներին: Կազմակերպվում են բազմաթիվ էքսկուրսիաներ դեպի պատմական վայրեր: Այնպես որ այն երեխաները, ովքեր ակտիվորեն և հետևողականորեն կմասնակցեն հայերենի դասընթացներին և մեր միջոցառումներին, հավանական է հնարավորություն ունենան երկու տարի հետո մեկնել Հայաստան՝ փառատոնին մասնակցելու: Ցանկության դեպքում հնարավորություն կտրվի նաև մեր երեխաներին տանել Հայաստան ամառային հանգիստը ճամբարներում անցկացնելու համար:

Ինչպես տեսնում եք, հետաքրքիր և հրապուրիչ ծրագրեր շատ կան, բայց այս ամենը կյանքի կոչելու և իրականացնելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուրիս ակտիվ մասնակցությունը և, իհարկե, ցանկությունը: Այս ամենը արվելու է միայն ու միայն մեր երեխաների շահերը պաշտպանելու և նրանց մեջ հայկական ոգին պահպանելու համար: Խորին շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր մեզ աջակցում են:

Սիրանուշ

Dans les coulisses de la chaine arménienne « Հ1 »

Pour rester quotidiennement en lien avec l'Arménie, vous êtes très nombreux à regarder la chaîne de télévision arménienne « Հ1 ». Cet été, nous avons eu l'occasion de visiter ses locaux et de rencontrer la journaliste Nouné Alexanyan et des techniciens du journal télévisé.

Louisette avec la journaliste du journal télévisé Nouné Alexanyan
Լուիզեթը « Հայլուր »-ի լրագրողուհի Նունե Ալեքսանյանի հետ

L'ensemble des installations de cette chaîne, la première historiquement du pays, est situé sur les hauteurs du quartier Vieux Nork d'où s'ouvre une vue imprenable sur la capitale arménienne Erevan. Jusque récemment, ce site accueillait encore 2000 salariés. Ils sont aujourd'hui environ 900 répartis entre des services techniques, journalistiques et d'autres équipes de création. Ils disposent notamment de 2 grands studios permettant de tourner les émissions les plus importantes. Le plus moderne est le plus sollicité. Plusieurs émissions peuvent s'y tourner dans la même journée. Le pavillon du studio *Erevan* dispose, quant à lui, d'installations fixes et est entièrement consacré à l'émission « Mon droit ». Celle-ci reconstitue de vraies audiences du tribunal civil (affaires de voisinage, acquisition immobilières, droit de la consommation, affaires familiale, succession …) et est très appréciée. Elle a beaucoup contribuée depuis 2 ans à l'éducation civique des Arméniens qui connaissent maintenant

« Հ1 » հեռուստաընկերության կուլիսներում

Որպեսզի Հայաստանի հետ կապը պահպանվի, մեզանից շատերն ամեն օր նայում են Հայաստանի « Հ1 » հեռուստաընկերության հաղորդումները: Այս ամռանը մենք հնարավորություն ունեցանք այցելելու « Հ1 »-ի տաղավարները և հանդիպում ունենալ լրագրողուհի Նունե Ալեքսանյանի և «Հայլուր»-ի տեխնիկական աշխատողների հետ:

Dans le pavillon du journal télévisé « Հայլուր »-ի տաղավարում

Առաջին հայկական հեռուստաընկերության մասնաշենքերը գտնվում են Երևանի Հին Նորք թաղամասի բարձունքների վրա, որտեղից բացվում է հայոց մայրաքաղաք Երևանի հիանալի տեսարանը: Ոչ վաղ անցյալում գրեթե 2000 մարդ ընդգրկված էին հեռուստաընկերության առօրյա աշխատանքի մեջ: Այսօր մոտ 900 հոգի են աշխատում տեխնիկական, լրատվական և այլ ստեղծագործական խմբերում: Վերջիններիս տրամադրության տակ կա երկու մեծ ստուդիա, որոնք հնարավորություն են տալիս նկարահանելու ամենակարևոր հաղորդումները: Մեծ է ժամանակակից սարքավորումներով վերազինված տաղավարների պահանջը. մեկ օրում կարող են նկարահանվել մի քանի հեռուստահաղորդումներ: « Երևան » ստուդիայի տաղավարն իր տրամադրության տակ ունի անշարժ սարքավորումներ և կահավորումներ, որոնք ամբողջովին տրամադրված են «Իմ իրավունքը» հեռուստահաղորդաշարի նկարահանումներին: Այս հաղորդումը, որը ներկայացնում է քաղաքացիական դատարանի իրական պատմություններ (քաղաքացիական վեճեր, սեփա-

mieux leurs droits et devoirs. D’autres émissions commencent à être produites par des sociétés privées de production dont l’émission particulièrement appréciée de sketchs humoristiques « 32 dents ».

Pavillon de l’émission « Mon droit ».
« Իմ իրավունքը » հեռուստահաղորդաշարի տաղավարում

Nous avons été particulièrement intéressés par le pavillon du journal télévisé qui permet la réalisation et la diffusion des 7 journaux quotidiens captés notamment par les Arméniens dispersés dans le monde via sa diffusion satellite.

Le commentateur de votre journal télévisé est seul sur le plateau pendant l’émission qui est diffusée en direct. C’est lui qui écrit ses interventions et il peut les lire sur le prompteur comme en France. Les techniciens sont dans la régie technique située juste à côté, derrière une grande baie vitrée. Pendant le journal, ils sont trois aux manettes : un ingénieur du son, un régisseur de la production et un monteur pour les images. Une équipe d’une vingtaine de journalistes, dont notre guide Nouné, travaille chaque jour à la production des reportages arméniens. Pour les affaires internationales, des journalistes visionnent tous les jours les journaux télévisés des chaînes étrangères (BBC, CNN, ORT, RTR…).

Un contrat est passé avec chacune d’entres elles pour l’achat de reportages retranscrits fidèlement en arménien. La chaîne ne dispose que de 3 journalistes arméniens à l’étranger qui lui permettent de faire des reportages en propre : un au Liban, un aux États-Unis et un à Moscou.

Comme chaque automne, la rédaction prépare ses nouvelles émissions pour la rentrée du 21 septembre, jour de l’indépendance de l’Arménie. D'une année à l'autre, les studios sont techniquement mieux équipés. Le journal télévisé, par exemple, est doté d’un nouveau décor et l’équipe dispose d’équipements techniques plus modernes. La numérisation des archives télévisuelles a commencé et il est question d’en organiser la mise à disposition du public via Internet.

Des journalistes stagiaires étrangers sont parfois accueillis par la chaîne mais pour l’instant aucun Français.

Si des jeunes de la communauté étaient intéressés par une telle carrière sachez qu’il existe à Lille une école de journalisme reconnue nationalement (voir site de l’école : www.esj-lille.fr).

Louisette et Garik

կանատիրական իրավունք, սպառողական իրավունք, ընտանեկան և ժառանգության հետ կապված գործեր...), շատ մեծ համբավ ունի: Վերջին երկու տարվա ընթացքում հաղորդումը մեծապես նպաստել է Հայաստանի բնակիչների քաղաքացիական իրավական դաստիարակությանը, ովքեր ճանաչում են իրենց իրավունքներն ու պարտականությունները: Որոշ հաղորդումներ նկարահանում են մասնավոր ընկերություններ, որոնցից ամենասիրվածը «32 ատամ» երգիծական հաղորդաշարն է:

Pavillion principal de la chaine « Հ1 »   « Հ1 »-ի գլխավոր տաղավարը

Մենք հատկապես հետաքրքրվեցինք «Հայլուր»-ի տաղավարով, որը հնարավորություն է տալիս պատրաստել և հեռարձակել ամենօրյա լուրերի 7 թողարկումներ, որոնք արբանյակային կապի միջոցով դիտում են նաև աշխարհասփյուռ հայերը:

Տաղավարում մեկնաբանը գտնվում է մենակ: Նա է գրում և պատրաստում մեկնաբանությունները և կարող է դրանք կարդալ, ինչպես Ֆրանսիայում, հուշավահանակի վրա: Տեխնիկական անձնակազմը գտնվում է տեխնիկական բաժնում՝ «Հայլուր»-ի տաղավարի անմիջական հարևանությամբ. Այն տաղավարից բաժանված է միայն ապակե պատով: Լուրերի հեռարձակման ժամանակ 3 օպերատոր գտնվում են ղեկավարման վահանակի դիմաց՝ հնչյունային ռեժիսորը, թողարկման ռեժիսորը և սերվերի մոնտաժողը: Մոտ երկու տասնյակ լրագրողներից բաղկացած կոլեկտիվը, որոնց թվում նաև մեր ուղեկցորդուհի Նունեն, ամեն օր աշխատում է հայաստանյան ռեպորտաժների պատրաստման վրա: Ինչ վերաբերվում է միջազգային անցուդարձին, լրագրողներն ամեն օր հետևում են միջազգային հեռուստաընկերությունների լուրերին (BBC, CNN, ORT, RTR…) :

Միջազգային գործակալություններից յուրաքանչյուրի հետ « Հ1 »-ը համագործակցում է ըստ պայմանագրի՝ օգտվելով նրանց տրամադրած նյութերից, որոնք բարեխղճորեն թարգմանվում են հայերեն: Արտասահմանում «Հայլուր»-ն ունի միայն երեք սեփական թղթակից, որոնք հնարավորություն են տալիս պատրաստելու ռեպորտաժներ առաջին ձեռքից՝ մեկը Լիբանանում, մեկը Միացյալ Նահանգներում և մեկը Մոսկվայում:

Ավանդաբար « Հ1 »-ը նոր եթերաշրջանը սկսում է սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի անկախության օրը: Հանդիսատեսի ուշադրությանն են ներկայացվում նոր հաղորդումներ: Օրավուր հարստանում է տաղավարի տեխնիկական հագեցվածությունը: «Հայլուր»-ի տաղավարի դեկորները փոխվել են, իսկ խմբագրությունն իր տրամադրության տակ ունի արդի ժամանակակից սարքավորումներ: Հեռուստատեսության արխիվների թվայնացումն արդեն սկսվել է և ծրագրեր կան հասարակությանը հնարավորություն ընձեռելու դրանց հետ ծանոթանալ ինտերնետի միջոցով:

Որոշ արտասահմանյան լրագրողներ հյուրընկալվում են հեռուստաընկերությունում փորձի փոխանակման համար, բայց մինչև այժմ նրանց թվում ֆրանսիացի չի եղել: Եթե Լիլի հայ համայնքի երիտասարդները հետաքրքրվում են լրագրողի մասնագիտությամբ, ապա իմացեք, որ Լիլում գոյություն ունի ժուռնալիստիկայի բարձրագույն դպրոց, որը համաֆրանսիական ճանաչում ունի (տե՛ս դպրոցի կայքը՝ www.esj-lille.fr):

Լուիզեթ և Գարիկ

Vazguen Sargsyan et les frères Vahé et Manvel Yeghshatyan

Վազգեն Սարգսյանը և Վահե և Մանվել Եղշատյան եղբայրները

Les succès des lutteurs arméniens de Lille dans le monde du sport

La notion de « diaspora » est très proche et très chère au cœur de tous les Arméniens du monde. Elle est une partie inséparable de la Mère-Patrie malgré la dispersion mondiale au gré des caprices du sort. L'Arménie et sa Diaspora sont les deux parties intégrantes du même corps qui vivent et respirent mutuellement. Des Arméniens se sont distingués partout dans le monde : de leurs propres mains ils ont bâti leur maison, ont planté des arbres, ont élevé leurs enfants dans l'esprit arménien et ont servi avec fidélité leur pays d'accueil. Ils ont aussi contribué à sa prospérité.

La France est le pays le plus hospitalier qui a accueilli à portes ouvertes les immigrés Arméniens en leur donnant de larges possibilités pour vivre et prospérer. La communauté arménienne de Lille est un petit foyer de la grande Diaspora arménienne de France qui offre à son pays d'accueil de nombreuses victoires sportives couronnées.

Donnons un bref aperçu des succès sportifs des Arméniens de Lille de ces dernières années. Notons qu'il s'agit de lutte, un sport traditionnel qui est très apprécié et a de profondes racines en Arménie. Malheureusement, ce sport n'est pas très répandu en France.

Présentons en premier la famille Yeghshatyan. Dans ce foyer, la lutte est perçue non seulement comme un sport dans lequel sont sérieusement impliqués l'aîné et le cadet des enfants, mais également comme un mode de vie, une psychologie sportive, un don, intimement mêlé à la vie quotidienne en tant qu'élément important et inséparable.

Tout d'abord mentionnons Sassoun Yeghshatyan, l'oncle de cette famille sportive dont on raconte la légende de son passé invincible. C'est lui qui a réussi à vaincre à Tbilissi, lors du « petit championnat » du monde, un des célèbres frères Beloglazov, Sergey, imbattu dix ans de suite. Sassoun est ainsi devenu le vainqueur de ce championnat.

Sassoun Yeghshatyan a été champion de l'ex-URSS et vainqueur de la 9^{e} spartakiade. Jusqu'à présent, il ne s'est pas coupé de son sport préféré. Il est l'entraîneur-conseiller de l'école de lutte de la ville de Koblents en Allemagne. En

Լիլահայ ըմբիշների նվաճումները սպորտային աշխարհում

Աշխարհում ապրող բոլոր հայերին սրտամոտ ու հարազատ է «Սփյուռք» անունը, որը Մայր Հայաստանի անբաժան մասն է, միայն թե ճակատագրի բերումով՝ սփըռված աշխարհով մեկ: Հայաստանը և Սփյուռքը մեկ մարմնի անբաժան մասերն են՝ միմյանցով ապրող ու շնչող: Աշխարհի որ մասում էլ հայը հայտնվել է, աննկատ չի մնացել, իր ձեռքերով իր տունն է կառուցել, իր ծառը տնկել, հայեցի ոգով զավակ մեծացրել ու սիրով ծառայել իրեն հյուրընկալած երկրին ու ծաղկեցրել:

Ֆրանսիան ամենահյուրընկալ երկիրն էր, որ դռընբաց ընդունեց պանդուխտ հայերին՝ ապրելու և բարգավաճելու լայն հնարավորություններ տալով նրանց: Լիլահայությունը Ֆրանսիայում մեծ Սփյուռքի մի փոքրիկ օջախն է, որն իրեն հյուրընկալած երկրին պարգևում է սպորտային բազմաթիվ դափնեզարդ բարձունքներ:

Անդրադառնանք վերջին տարիների ընթացքում լիլահայ մարզիկների սպորտային նվաճումներին: Նշենք, որ խոսքը Հայաստանում հին ու խորը արմատներ ունեցող ավանդական ու սիրված մի մարզաձևի՝ ըմբշամարտի մասին է, որը, ցավոք, Ֆրանսիայում այնքան էլ տարածում չունի:

Առաջինը ներկայացնենք Եղշատյանների ընտանիքին, քանի որ այս օջախում ըմբշամարտը ընդունված է ոչ միայն որպես սպորտաձև, որով լրջորեն զբաղվում են ընտանիքի ավագ և կրտսեր զավակները, այլև ապրելաձև է, ի վերուստ տրված մարզական հոգեբանություն, կենցաղին միահյուսված անբաժան և կարևոր մի տարր:

Նախ հիշենք Սասուն Եղշատյանին՝ մարզական այս ընտանիքի հորեղբորը, որի անպարտելի անցյալի մասին լեգենդներ են պատմում: Ի դեպ, տասը տարի անընդմեջ աշխարհում պարտություն չկրած հանրահայտ Բելոգլազով եղբայրներից Սերգեյին հենց Սասունին հաջողվեց հաղթել Թբիլիսիում կայացած « աշխարհի փոքր առաջնություն » կոչվող մրցաշարում, որտեղ և նա նվաճեց չեմպիոնի կոչումը: Սասուն Եղշատյանը ԽՍՀՄ չեմպիոն է, 9-րդ ամառային սպարտակիադայի հաղթող:

même temps, il fait des démonstrations pour les jeunes lutteurs.

Les fils de son frère, Vahé et Manvel Yeghshatyan, ont pris avec succès la relève de leur éminent oncle. Ils ont commencé leur parcours sportif en Arménie et l'ont heureusement poursuivi ici, en France. Retraçons seulement le palmarès de leurs victoires.

La réussite sportive des frères Yeghshatyan
Եղշատյան եղբայրների մարզական պարգևների հավաքածուն

Vahé Yeghshatyan. 2003 – 1ère place du championnat de France (adultes), juin 2004 – 1ère place de l'universiade de France, 2005 – 2^{e} place du championnat de France (adultes), 2007 – 1ère place du championnat de France (adultes), 2007 – 1ère place du championnat de France en équipe. Il est également participant et lauréat de plusieurs tournois internationaux que nous n'allons pas détailler. En effet, le double titre de champion de France de Vahé rend inutiles les commentaires.

Manvel, le frère cadet, à de très bonnes dispositions pour la lutte, il ne cède rien à son aîné. Voici son palmarès : 2003 – 3^{e} place du championnat de France (adultes), mars 2004 – 2^{e} place du championnat de France (adultes), 2005 – 3^{e} place du championnat de France (adultes), 2006 – 2^{e} place du championnat de France (adultes), 2006 – 2^{e} place du championnat de France (en équipe), 2007 – 1ère place du championnat de France (en équipe), 2007 – 3^{e} place du championnat de France (adultes), 2007 – 1ère place de l'universiade de France.

Cette liste n'est pas exhaustive et on peut la compléter par de nombreux autres succès dans les tournois internationaux. Ce qui frappe c'est que ces multiples victoires n'ont pas donné un vertige de star aux frères Yeghshatyan. Ils restent les mêmes garçons modestes, simples et ouverts qui perçoivent la victoire comme le fruit de leur dur travail. Elle est offerte au pays sous le drapeau duquel ils entrent sur le tapis et également, sans aucun doute, à leur nostalgique patrie lointaine qui est fière des succès évidents de ses enfants.

Malgré ces succès, une tristesse demeure à leurs yeux : l'impossibilité de pouvoir envisager un avenir d'entraîneur, car de nombreux obstacles, matériels et administratifs, jusqu'à présent insurmontables, se trouvent sur leur chemin. Ainsi, le bonheur et la joie unique de la victoire des frères lauréats restent incomplets. Ce métier chéri suppose la continuation logique de la transmission à la jeune génération leurs acquis et expériences accumulés. Nous souhaitons à ces frères lutteurs admirables, actifs et motivés, la réalisation complète de leurs rêves, une bonne chance sportive et une pluie battante de succès et de couronnes glorieuses.

Նա այսօր էլ չի բաժանվել սիրած մարզաձևից. Գերմանիայի Կոբլենց քաղաքի ըմբշամարտի դպրոցի խորհրդատու մարզիչն է, միաժամանակ ցուցադրական ելույթներ է ունենում երիտասարդ ըմբիշների համար:

Սասունի գործը մեծ հաջողությամբ շարունակում են նրա եղբորորդիները՝ Եղշատյան եղբայրներ Վահեն ու Մանվելը, որոնք անվանի հորեղբոր արժանի սաներն են: Սպորտային իրենց կենսագրությունը սկսելով Հայաստանում՝ այսօր էլ մարզական հաղթարշավը շարունակում են այստեղ՝ Ֆրանսիայում: Թվենք նրանց հաղթանակներից մի քանիսը միայն:

Վահե Եղշատյան. 2003թ. – Ֆրանսիայի մեծահասակների առաջնության առաջին մրցանակ, 2004թ. հունիս – Ֆրանսիայի ուսանողների առաջնության չեմպիոն, 2005թ – Ֆրանսիայի մեծահասակների առաջնության երկրորդ մրցանակ, 2007թ. – Ֆրանսիայի մեծահասակների առաջնության չեմպիոն, 2007թ. – Ֆրանսիայի թիմային առաջնության չեմպիոն: Ինչպես նաև բազմաթիվ միջազգային մրցաշարերի մասնակից և դափնեկիր է, որոնք չենք մանրամասնում: Փաստորեն Վահեն Ֆրանսիայի կրկնակի չեմպիոն է, և բա-ռերն այստեղ ավելորդ են. փաստերն իրոք խոսուն են:

Ավագից հետ չի մնում կրտսեր եղբայրը՝ Մանվելը, որը ըմբշամարտիկի համար ունի հրաշալի տվյալներ: Մանվել Եղշատյան. 2003թ. – Ֆրանսիայի մեծահասակների առաջնության երրորդ տեղ, 2004թ. մարտ – Ֆրանսիայի մեծահասակների առաջնության երկրորդ տեղ, 2005թ.- Ֆրանսիայի մեծահասակների առաջնության երրորդ տեղ, 2006թ. մեծահասակների առաջնության երկրորդ տեղ, 2006թ. – Ֆրանսիայի թիմային առաջնության երկրորդ տեղ, 2007թ. – նույն առաջնության առաջին տեղ, 2007թ. – Ֆրանսիայի մեծահասակների առաջնության երրորդ տեղ, 2007թ. – Ֆրանսիայի համալսարանների առաջնության չեմպիոն:

Հաղթարշավի այս տվյալները ամբողջական չեն, կարող ենք լրացնել միջազգային մրցաշարերի նվաճումներով: Զարմանալին այն է, որ բազմաթիվ հաղթանակները աստղային գլխապտույտ չեն պատճառել Եղշատյան եղբայրներին: Նրանք նույն համեստ, պարզ ու հասարակ տղաներն են մնացել, որոնք հաղթանակը ընկալում են որպես իրենց տքնաջան աշխատանքի արգասիք, որը սիրով նվիրում են ինչպես այն երկրին, որի դրոշի ներքո հանդես են գալիս, այնպես էլ, անտարակույս, հեռու մնացած իրենց կա-րոտյալ հայրենիքին, որը հպարտանում է իր զավակների ակնառու ձեռքբերումներով:

Բայց, այնուհանդերձ, ըմբիշ եղբայրների հայկական աչքերում թախիծ կա թաքնված. նրանք չեն տեսնում իրենց մարզչական ապագան, քանի որ այն կազմակերպելու համար նյութական և թղթաբանական առայժմ չհաղթահարված բազում խոչընդոտներ կան: Եվ դափնեկիր եղբայրների երջանկությունն ու հաղթանակի անկրկնելի բերկրանքը մնում են թերի, կիսատ-պռատ, քանի որ սիրած գործը պետք է ունենա իր տրամաբանական շարունակությունը, այն է՝ մատաղ սերնդին փոխանցել կուտակած փորձն ու հմտությունները: Մենք այս հրաշալի, գործող ու մարտունակ ըմբիշ եղբայրներին մաղթում ենք թերի մնացած երազանքների լիակատար իրականացում, սպորտային բարի բախտ, հաջողության և փառապանծ դափնիների տեղատարափ:

Ըմբշամարտի ասպարեզում մեր հաջորդ մրցանակակիրը Վազգեն Սարգսյանն է, որը նույնպես լիլահայության ներկայացուցիչ է և իր սպորտային հաջողություններով մեծ ուրախություն է պարգևում իր հայրենակիցներին: Ըմբշամարտիկի իր որակավորումը նա ստացել է սկզբում Հայաստանում՝ վաստակավոր մարզիչ Ռազմիկ Գոլեցյանի ղեկավարած Արտաշատ քաղաքի Օլիմպիական հետթափո-

Vazguen Sargsyan est le champion suivant connu dans le domaine de la lutte. Il représente aussi la communauté arménienne de Lille. Avec ses succès sportifs, il apporte de la joie à ses compatriotes. Initialement, il a eu sa qualification de lutteur en Arménie, à l'école spécialisée *La relève olympique* de la ville d'Artachat dirigée par l'entraîneur émérite Razmik Goletsyan. De 1998 à 2001, il s'est entraîné au CREPS de Wattignies.

Retraçons le chemin sportif de Vazguen Sargsyan. 2000 – 1ère place du championnat de France (junior), 2001 – participation avec succès aux étapes préliminaires du championnat du monde en Roumanie et en Grèce. Au championnat du monde à Tachkent il a été sélectionné en finale. Il est également champion de France en équipe et à la FNSV. En 2001-2002, il est officiellement nommé le meilleur lutteur du Nord-Pas-de-Calais. Depuis 2001, Vazguen Sargsyan est entraîneur au club de lutte de Lille. Grâce à ce travail, plusieurs jeunes lutteurs ont remporté des victoires.

Nous avons essayé de vous présenter brièvement les succès des lutteurs issus de la communauté arménienne de Lille. Ils ont aujourd'hui leur digne relève. En dépit de son jeune âge, elle nous surprend par ses nouvelles conquêtes. Les plus illustres d'entre eux sont les frères Aris et Levon Hanevizyan (Aris est le champion de France junior 2006), Mihran Hayrapetyan, Haroutyoun Zakarian, Hovhannes Kotcharyan qui, au cours de différents tournois, ont porté haut les couleurs de la lutte, ce sport très arménien, et, bien évidemment, représenté l'Arménie.

Nous souhaitons une bonne continuation aux sportifs d'origine arménienne dans leur difficile entreprise, bonne chance et d'innombrables sommets à conquérir encore. Si vous souhaitez, pour vous ou vos enfants pratiquer ce sport, vous pouvez vous adresser à 40, rue Goffelet, 59000, Lille, salle Jean Macé.

Soussanna

խի մասնագիտացված դպրոցում, ապա՝ 1998-2001թ.թ. Ուաթինյիի CREPS-ում: Նշենք Վազգեն Սարգսյանի մարզական ուղին:

2000թ. – Ֆրանսիայի պատանիների առաջնության չեմպիոն, 2001թ.- Ռումինիայում և Հունաստանում հաջողությամբ հանդես է եկել աշխարհի առաջնության նախընտրական փուլային մրցապայքարում: Տաշքենդում կայացած աշխարհի առաջնությունում նվաճել է եզրափակիչի ուղեգիր, եղել է թիմային հաշվարկով, ինչպես նաև FNSV-ի գծով Ֆրանսիայի չեմպիոն, 2001 և 2002 թթ. պաշտոնապես ճանաչվել է Նորդ-Պա-դը-Կալեի լավագույն ըմբիշ: Վազգեն Սարգսյանը 2001 թվականից մինչև օրս Լիլի ըմբշամարտի ակումբի մարզիչն է, և նրա մարզչական աշխատանքի շնորհիվ շատ պատանիներ նվաճել են հաղթանակի դափնիներ:

Մենք աշխատեցինք ձեզ համառոտ ներկայացնել լիլահայ ըմբշամարտիկների հաղթարշավները: Չմոռանանք փաստել նաև, որ այսօր մեր անվանի մարզիկները ունեն իրենց արժանի հերթափոխը, որոնք, չնայած պատանեկան տարիքին, զարմացնում են մեզ իրենց նորանոր նվաճումներով: Նրանցից նշենք ամենաակնառուներին՝ Արիս և Լևոն Հաննիզյան եղբայրներին (Արիսը 2006թ.-ի Ֆրանսիայի պատանիների չեմպիոնն է), Միհրան Հայրապետյանին, Հարություն Զաքարյանին, Հովհաննես Քոչարյանին, որոնք տարբեր մրցաշարերում բարձր են պահում խիստ հայկական այս մարզաձևի՝ ըմբշամարտի և, իհարկե, հայի պատիվը:

Դե ինչ, բարի երթ մաղթենք մեր հայազգի մարզիկներին իրենց դժվարին գործում, բարի երթ և անհամար դեռևս չնվաճված գագաթներ: Եթե դուք կամ ձեր երեխաները ցանկություն ունենաք պարապելու այս մարզաձևով, կարող եք դիմել հետևյալ հասցեով՝ 40, Գոֆլեի փողոց, 59000, Լիլ, Ժան Մասեի դահլիճ:

Սուսաննա

Vahé Yeghshatyan, champion de France 2007, sur le piédestal

Վահե Եղշատյանը՝ 2007 թ. Ֆրանսիայի չեմպիոնը, պատվո հարթակի վրա

Rencontre avec le centre social arménien *Arpag Mekhitarian* et l'école *Sevan*

Le 3 juin dernier, Anna, Christina, Siranouche et moi sommes allées à la rencontre de l'école *Sevan* et du Centre social Mekhitarian à Bruxelles. L'organisation de leur spectacle de fin d'année était l'occasion pour nous de faire leur connaissance et d'avoir leurs conseils pour nos propres projets de cours de danse et d'arménien. Après le spectacle

Հանդիպում «Արպագ Մեխիտարյան» հայկական մշակութային միությունում և «Սևան» դպրոցում

Այս տարվա հունիսի 3-ին Աննան, Քրիստինեն, Սիրանուշը և ես գնացել էինք Բրյուսել՝ հանդիպելու «Սևան» դպրոցի և Մեխիտարյան մշակութային միության անդամների հետ: Կազմակերպության տարեվերջյան ներկայացումն առիթ էր մեզ համար ծանոթանալու իրենց հետ և ստանալու

composé de danses, de contes et de poèmes interprétés en français et en arménien par des enfants de 5 à 14 ans, nous avons pu discuter des différentes activités avec les responsables dont Madame Sympadian, la directrice de l'école, qui nous a accueillit avec beaucoup de chaleur.

La communauté arménienne de Bruxelles est ancienne et a fondée l'école et le centre social. Aujourd'hui, de nouvelles familles arméniennes arrivent essentiellement d'Arménie. Le centre social essaie d'aider ce public qui a du mal à s'insérer. L'école concentre surtout ses efforts à ces nouveaux arrivants et dispense des cours de soutien scolaire en français et en néerlandais.

Les cours de langue arménienne (orientale) sont moins nombreux. De plus, beaucoup des enfants accueillis ne parlent pas arménien étant issus de familles vivant depuis plusieurs générations en Belgique. L'activité danse est en plein renouveau et accueille les enfants dès 5 ans. Les costumes ont été créés par des membres de l'association. Un spectacle de fin d'année est organisé tous les ans afin de montrer aux parents les réalisations et les capacités des enfants et de récolter des fonds pour le centre social.

D'autres écoles existent en Belgique notamment à Gand, Liège et Anvers.

Louisette

Exposition sur l'alphabet arménien

Jusqu'au 29 septembre prochain, vous pouvez voir une exposition sur l'alphabet arménien réalisée par l'Association des plasticiens arméniens de France à la médiathèque du Faubourg de Béthune (6 bis, boulevard de Metz, square Chopin à Lille).

C'est une exposition de qualité qui réunit peintures, collages et sculptures. Des livres, des objets d'artisanat, des costumes ont été fournis par différentes familles pour enrichir cette manifestation. Madame Catherine Martinache, la responsable de la médiathèque, sera heureuse de vous accueillir.

Nous vous en dirons plus sur l'exposition et l'Association des plasticiens arméniens de France dans notre prochain numéro.

Louisette

խորհուրդներ՝ կապված մեր սեփական ծրագրերի հետ (պարի պարապմունքներ, հայոց լեզվի դասեր): Ներկայացումից հետո, որը կազմված էր պարերից, հեքիաթների բեմականացումից և ոտանավորներ արտասանելուց՝ 5-ից 14 տարեկան երեխաների կատարմամբ հայերեն և ֆրանսերեն լեզուներով, մենք հնարավորություն ունեցանք մտքեր փոխանակելու գործունեության տարբեր ոլորտների մասին մի քանի ղեկավարների՝ այդ թվում դպրոցի տնօրեն տիկին Սեմպադյանի հետ, ով մեզ շատ ջերմ ընդունեց:

Բրյուսելի հայ համայնքը նորաստեղծ չէ և ունի իր մշակութային կենտրոնը և դպրոցը: Այսօր հայ ընտանիքների նոր հոսքը գալիս է հիմնականում Հայաստանից: Մշակութային կենտրոնը ջանում է նրանց օգնել, քանի որ կան համակերպվելու բազմաթիվ խնդիրներ: Դպրոցը հիմնականում կենտրոնացնում է իր ջանքերը նորեկների վրա և կազմակերպում հատուկ պարապմունքներ ֆրանսերեն և ֆլամանդերեն լեզուներով ի օգնություն դպրոցական ծրագրի:

Արևելահայերենի դասերի աշակերտների քանակն այնքան էլ մեծ չէ: Ավելին, հաճախող երեխաների մի մասը հայերեն չգիտի: Նրանք հիմնականում սերում են այն ընտանիքներից, ովքեր վաղուց են հաստատվել Բելգիայում: Իսկ ահա պարի պարապմունքները, որոնց կարելի է մասնակցել 5 տարեկանից սկսած, նոր ծնունդ են ապրում: Զգեստները կարվում են միության անդամների ջանքերով: Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում կազմակերպվում են հանդեսներ, որպեսզի ծնողներին ցույց տրվեն իրենց երեխաների ունակություններն ու հնարավորությունները, ինչպես նաև մշակութային կենտրոնի գործունեության համար գումարներ հավաքվի:

Հայկական դպրոցներ են գործում նաև Բելգիայի մյուս քաղաքներում՝ Գենտում, Լիեժում, Անտվերպենում:

Լուիզեթ

Ցուցահանդես՝ նվիրված հայոց այբուբենին

Մինչև սեպտեմբերի 29-ը Ֆոբուր դը Բեթյունի գրադարանի մասնաշենքում (6, բուլվար դը Մեց, Շոպենի պուրակ, Լիլ) դուք կարող եք դիտել հայոց այբուբենին նվիրված ցուցահանդեսը, որը Լիլ են բերել Ֆրանսիայի հայազգի նկարիչ-ստեղծագործողների միության անդամները:

Սա մի բարձր որակի ցուցահանդես է, որն իր մեջ ներառել է կտավներ, կոլաժներ և քանդակներ: Բազմաթիվ հայ ընտանիքներ հոժարակամ գրադարանին են տրամադրել գրքեր, արհեստագործական առարկաներ և հայկական տարազների նմուշներ, որպեսզի էլ ավելի հարստացնեն այս նախաձեռնությունը: Գրադարանի վարիչ տիկին Կատրին Մարտինաշը մեծ ուրախությամբ ձեզ կընդունի և կծանոթացնի ցուցահանդեսին:

Այս իրադարձության և Ֆրանսիայի հայազգի նկարիչ-ստեղծագործողների միության մասին ավելի մանրամասն ձեզ կպատմենք մեր հաջորդ համարում:

Լուիզեթ

COMMUNICATIONS

Association *Ararat*

L'assemblée Générale de l'association *Ararat* a eu lieu le 19 septembre dernier. Les points suivants ont été étudiés : bilan d'activité et financier des années passées, modification des statuts, élection des membres du bureau, projet d'activité et de budget 2007/2008, fixation du montant de la cotisation et du tarif des activités, bulletins d'adhésion et d'inscription, point sur le prochain numéro de la gazette.

Ont été élus :
Louisette Lamarche Galstyan, Présidente,
Haïk Gambarian, vice-président,
Siranouche Babikyan, secrétaire,
Garik Galstyan, trésorier.

Le montant de l'adhésion à l'association a été fixée à 10 euros pour une année, et 15 euros avec l'abonnement à la Gazette. L'abonnement à la Gazette seule a été fixé à 6 euros pour une année. L'inscription aux cours d'arménien coûtera 5 euros par mois plus l'adhésion à l'association.

L'association est ouverte à tous, n'hésitez pas à nous rejoindre en adhérant. Nous serons présents par un stand lors de la fête du 21 septembre. Sinon vous pouvez nous contacter au 03 20 05 42 25 ou 06 80 81 95 04 ou par mail à notre adresse aadelille@voila.fr.

Rencontre Belgique-Arménie

Dans le cadre des phases éliminatoires du championnat d'Europe de football, le 17 octobre prochain, à Bruxelles, aura lieu le match Belgique-Arménie. Vous pouvez vous procurer des places sur le site de la Fédération royale belge de football www.footbel.be.

Les billets sont en vente depuis le 19 septembre. Vous pouvez vous rapprocher de Karen Zakarian (06.50.49.70.47) si vous avez de la place dans votre voiture ou si vous en chercher une.

Papiers d'Arménie

Du 11 septembre au 27 octobre du mardi au samedi à 20h30, vous pouvez assister à la pièce de théâtre intitulée *Papiers d'Arménie* de Caroline Safarian. Ce spectacle, qui a tourné en France pendant l'année de l'Arménie, illustre avec profondeur, sensibilité et humour le vécu d'aujourd'hui de la non reconnaissance du génocide arménien. Vous pouvez prendre des informations sur ce spectacle dans le numéro de juin du magazine du Comité des arméniens de Belgique *Hay* consultable sur leur site www.hay-info.be. Les réservations peuvent être faites sur le site www.theatrelepublic.be .

Pour tout cela et pour toute autre remarque, vous pouvez nous joindre aux adresses suivantes :
Par mail : aadelille@voila.fr
Par courrier : 4 impasse du clos Ferrer, 59 000, Lille-Fives
Par téléphone : 03.20.05.42.25 ou 03.20.57.45.06

Այս համարին առնչվող բոլոր դիտողությունները Դուք կարող եք մեզ հայտնել հետևյալ հասցեներով՝
Էլեկտրոնային փոստ՝ aadelille@voila.fr
Փոստային հասցե՝ 4 impasse du clos Ferrer, 59 000, Lille-Fives
Հեռախոսներ՝ 03.20.05.42.25 կամ 03.20.57.45.06

ԼՐԱՀՈՍ

«Արարատ» միություն

Սեպտեմբերի 19-ին տեղի ունեցավ «Արարատ» միության ընդհանուր ժողովը: Քննարկվել են հետևյալ հարցերը՝ անցյալ տարիների ֆինանսական և գործունեության արդյունքները, կանոնադրության մեջ մտցվող փոփոխություններ, բյուրոյի անդամների ընտրություններ, ապագա գործունեության ծրագրերը, 2007/2008 թթ. բյուջեն, անդամավճարի սահմանումը, ապագա գործունեության ծախսերի հաստատումը, անդամակցության և գրանցման հարցեր, համայնքային թերթի գալիք համարի նյութերի քննարկում: Բյուրոյի անդամներ են ընտրվել.

Լուիզեթ Լամարշ Գալստյան – նախագահ,
Հայկ Ղամբարյան – նախագահի տեղակալ,
Սիրանուշ Բաբիկյան – քարտուղարուհի,
Գարիկ Գալստյան – գանձապահ:

Միությանն անդամակցության գումարը հաստատվել է տարեկան 10 եվրո, «ՄԱ-ՍԻՍ» թերթի արոնեմենտի հետ՝ 15 եվրո: Միայն թերթի աբոնեմենտի գումարը սահմանվել է տարեկան 6 եվրո: Հայոց լեզվի դասընթացներին գրանցվելը կարժենա ամսական 5 եվրո՝ գումարած միությանն անդամակցության տարեկան 10 եվրոն:

Միության դռները բաց են բոլորի առաջ, այնպես որ մի՛ վարանեք մեզ միանալ իբրև լիիրավ անդամներ: Առանձին ստենդով մենք ներկա կլինենք սեպտեմբերի 21-ին կայանալիք տոնին: Դուք կարող եք մեզ հետ կապնըվել հետևյալ հեռախոսահամարներով՝ 03.20.05.42.25 կամ 06.80.81.95.04 կամ էլ էլեկտրոնային փոստով՝ aadelille@voila.fr:

Բելգիա-Հայաստան ֆուտբոլային հանդիպում

Եվրոպայի առաջնության նախընտրական փուլում հոկտեմբերի 17-ին Բրյուսելում կկայանա Բելգիա-Հայաստան ֆուտբոլային հանդիպումը: Տոմսեր կարող եք ձեռք բերել օգտվելով Բելգիայի Ֆուտբոլի թագավորական ֆեդերացիայի կայքից՝ www.footbel.be: Սեպտեմբերի 19-ից տոմսերն արդեն վաճառվում են: Դուք կարող եք կապ հաստատել Կարեն Զաքարյանի հետ (06.50.49.70.47), եթե ազատ նստատեղ ունեք ձեր ավտոմեքենայում կամ էլ փնտրում եք ազատ տեղ:

«Հայկական փաստաթղթեր»

Սեպտեմբերի 11-ից մինչև հոկտեմբերի 19-ը՝ երեքշաբթիից մինչև շաբաթ, ժամը 20.30, դուք կարող եք դիտել Կարոլին Սաֆարյանի «Հայկական փաստաթղթեր» ներկայացումը: Այս բեմադրությունը, որը ցուցադրվել է Ֆրանսիայում Հայաստանի տարվա շրջանակներում, զգացմունքորեն և երգիծանքով խորապես ներկայացնում է հայոց ցեղասպանության ժխտողականության այսօրվա իրականությունը: Այս ներկայացման մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ Բելգիայի հայկական կոմիտեի «Հայ» էլեկտրոնային թերթի հունիս ամսվա համարում՝ www.hay-info.be: Տոմսերի պատվերները կարող եք կատարել հետևյալ կայքից՝ www.theatrelepublic.be.

Charles Aznavour chantera au Zénith de Lille le 12 novembre prochain. Prix des places de 59 à 84 euros. Réservations à la Fnac et dans vos centres commerciaux.

Նոյեմբերի 12-ին Շառլ Ազնավուրը համերգով հանդես կգա Լիլի « Զենիթ » համերգասրահում: Տոմսերի արժեքն է՝ 59-ից 84 եվրո, որոնք կարելի է ձեռք բերել «Ֆնակ»-ում և մոտակա առևտրի կենտրոններում:

La Galerie « Une poussière dans l'oeil », 17 bis, chemin des Vieux arbres à Villeneuve d'Ascq (03.20.33.49.76) prépare la pièce *Voyage en Arménie* d'Ossip Mandelstam dans sa traduction française d'André du Bouchet. Ce spectacle aura lieu les 19 et 26 novembre, les 3, 10 et 17 décembre et le 7 janvier 2008. Le nombre de places est très limité, il faut donc absolument réserver d'avance.

«Փոշեհատիկն աչքի մեջ» վերնատունը, հասցեն՝ 17 bis, chemin des Vieux arbres à Villeneuve d'Ascq (03.20.33.49.76), բեմադրության է պատրաստում Օսիպ Մանդելշտամի « Ճանապարհորդություն դեպի Հայաստան » պիեսը՝ Անդրե դյու Բուշեի թարգմանությամբ: Ներկայացումը տեղի կունենա նոյեմբերի 19-ին և 26-ին, դեկտեմբերի 3-ին, 10-ին և 17-ին, և 2008 թ. հունվարի 7-ին: Տեղերը սահմանափակ են, և նախնական պատվերը պարտադիր է:

ASSOCIATION ARARAT
65 Rue Saint Bernard
59000, Lille

BULLETIN D'ADHÉSION

Nom ____________________ Prénom ____________________
Adresse ____
Mail ____
Adhère à l'association ARARAT pour l'année 2007/2008
a payé une adhésion simple de 10 euros
une adhésion groupée avec la gazette *Ma-sis* de 15/20 (version couleur) euros

ASSOCIATION ARARAT
65 Rue Saint Bernard
59000, Lille

ABONNEMENT À LA GAZETTE *MA-SIS*

Nom ____________________ Prénom __________ ____________
Adresse ____
Mail ____
S'abonne un an à la gazette MA-SIS pour 6 euros.

ASSOCIATION ARARAT

COURS D'ARMÉNIEN

Bulletin d'inscription pour l'année 2007-2008

Nom ________________ Prénom ________________ du représentant légal de l'enfant
Numéro de téléphone où il peut être contacté en cas d'urgence :____________________
Personnes habilitées a venir chercher l'enfant :____________________
Nom ________________ Prénom ________________ Age ____________
Adresse ____
Niveau de pratique de l'arménien :
Parlé oui □ non □ un peu □ Lu oui □ non □ un peu □ Ecrit oui □ non □ un peu □
Remarques et souhaits : ____
____
Dans le cadre de ces activités, vous autorisez l'association à photographier et filmer votre enfant.
Vous attestez que votre enfant est couvert par une assurance pour les activités scolaires et de loisirs.
Coût de l'inscription 10 euros annuel d'adhésion à l'association et 5 euros par mois.
Bulletin à retourner au 4 Impasse du clos Ferrer 59 000 Lille-Fives.
Le : ____________ Signature ____________

Responsable de publication en français : Louisette Lamarche
Responsable de publication en arménien : Haïk Gambarian, Garik Galstyan
Traduction : Haïk, Garik, Louisette

Ֆրանսերեն հրատարակչության պատասխանատու՝ Լուիզեթ Լամարշ
Հայերեն հրատարակչության պատասխանատու՝ Հայկ Ղամբարյան, Գարիկ Գալստյան
Թարգմանությունները՝ Հայկի, Գարիկի, Լուիզեթի

Imprimé par nos soins.
À ne pas jeter sur la voie publique.

Տպագրված է մեր միջոցներով :
Չգցե՛լ հասարակական վայրերում :